ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2025 թվականի N 1699 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի N 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի ««Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, գույք հետ վերցնելու և գույք ամրացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N 1398-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 37-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

2) որոշման 6-րդ կետում «1455.2» թիվը փոխարինել «1941.4» թվով.

3) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին և 8.2-րդ կետերով՝

«8.1. Նախկին «Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը հետ վերցնել և թողնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը՝ համաձայն N 3 հավելվածի:

8.2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը թողնված՝ պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքից և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասից հետ վերցնել և որպես սոցիալական բնակարանային ֆոնդ ամրացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ համաձայն N 4 հավելվածի:».

4) որոշումը լրացնել նոր՝ NN 3 և 4 հավելվածներով՝ համաձայն NN 2 և 3 հավելվածների.

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ որոշման 6-րդ կետում կատարված փոփոխությամբ պայմանավորված՝ եռամսյա ժամկետում իրականացնել անշարժ գույքի կադաստրային չափագրման և դրա նկատմամբ նոր իրավունքների պետական գրանցման աշխատանքները՝ հիմք ընդունելով գույքի չափագրման արդյունքում ստացված փաստացի մակերեսները և համապատասխան փոփոխություն կատարել «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 2021 թվականի օգոստոսի 5-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման 41/0021 պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր):

3. Սահմանել, որ սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքի կադաստրային չափագրման և դրա նկատմամբ նոր իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման Հայաստանի Հանրա-

պետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի, իսկ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների գրանցման ծախսերը՝ «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ եռամսյա ժամկետում իրականացնել սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ամրացված անշարժ գույքի կադաստրային չափագրում և դրա նկատմամբ իրավունքների պետական գրանցում՝ հիմք ընդունելով գույքի չափագրման արդյունքում ստացված փաստացի մակերեսները, չափագրման և իրավունքների պետական գրանցման ծախսերն իրականացնելով նախարարության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ